

**«ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ  
ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ»  
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ (CMR) ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԵՌՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

---



**«ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ  
ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ»  
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ (CMR) ԼՐԱՅՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԵՌՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

---



**ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**2008 ԹՎԱԿԱՆ**

**«ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ  
ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ»  
ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ (CMR) ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԵՌՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սույն արձանագրության կողմերը,

*Լինելով* 1956 մայիսի 19-ին Ժնևում կատարված «Բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների պայմանագրի մասին» կոնվենցիայի (CMR) կողմեր,

*Ցանկանալով* լրացնել Կոնվենցիան՝ տվյալների էլեկտրոնային գրանցման եւ մշակման համար օգտագործվող ընթացակարգերով բեռնագրի կամընտիր կազմման գործընթացը դյուրացնելու նպատակով,

Համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սահմանումները

Սույն արձանագրության իմաստով՝

«Կոնվենցիա» նշանակում է «Բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների պայմանագրի մասին»

կոնվենցիա (CMR).

«Էլեկտրոնային հաղորդակցություն» նշանակում է տեղեկություններ, որոնք գեներացվել, ուղարկվել, ստացվել կամ պահվել են էլեկտրոնային, օպտիկական, թվային կամ համանման միջոցներով, որի արդյունքում այդ փոխանցված տեղեկությունները հասանելի են դառնում հետագայում դրանց հղում կատարելու նպատակով օգտագործման համար.

«Էլեկտրոնային բեռնագիր» նշանակում է փոխադրողի, ուղարկողի կամ փոխադրման այն պայմանագրի կատարմամբ շահագրգռված ցանկացած այլ կողմի կողմից էլեկտրոնային հաղորդակցության միջոցով տրամադրված բեռնագիր, որի վրա տարածվում է Կոնվենցիան, այդ թվում՝ այն տվյալները, որոնք տրամաբանորեն կապված են էլեկտրոնային հաղորդակցության հետ՝ կցված նյութերի ձեռով, կամ կապված են էլեկտրոնային հաղորդակցության հետ այլ կերպ՝ դրա տրամադրմանը զուգահեռ կամ դրանից հետո՝ էլեկտրոնային բեռնագրի մաս կազմելու համար.

«Էլեկտրոնային ստորագրություն» նշանակում է տվյալներ՝ էլեկտրոնային ձեռով, որոնք կցված են կամ տրամաբանորեն կապված են այլ էլեկտրոնային տվյալների հետ եւ ծառայում են որպես իսկության հաստատման միջոց:

## Հոդված 2

### Էլեկտրոնային բեռնագրի գործողության ոլորտը եւ գործողությունը

1. Սույն արձանագրության դրույթներին համապատասխան՝ Կոնվենցիայում նշված բեռնագիրը, ինչպես նաեւ ցանկացած պահանջ, հայտարարություն, ցուցում, հարցում, վերապահում կամ այլ հաղորդակցություն, որը վերաբերում է այն փոխադրման պայմանագրի կատարմանը, որի վրա տարածվում է Կոնվենցիան, կարող է կազմվել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով:

2. Սույն արձանագրության դրույթներին համապատասխանող էլեկտրոնային բեռնագիրը համարվում է Կոնվենցիայում նշված բեռնագրին հավասարազոր եւ հետեւաբար ունի նույն ապացուցողական արժեքը եւ առաջացում է նույն ազդեցությունը, ինչ այդ բեռնագիրը:

### Հոդված 3

#### Էլեկտրոնային բեռնագրի իսկության հաստատումը

1. Էլեկտրոնային բեռնագրի իսկությունը հաստատվում է փոխադրման պայմանագրի կողմերի կողմից հուսալի էլեկտրոնային ստորագրության միջոցով, որն ապահովում է էլեկտրոնային բեռնագրի հետ դրա կապը: Այլ բան չապացուցվելու դեպքում ենթադրվում է, որ էլեկտրոնային ստորագրության մեթոդը հուսալի է, եթե՝

ա) էլեկտրոնային ստորագրությունը բացառապես կապված է ստորագրող անձի հետ.

բ) էլեկտրոնային ստորագրությամբ կարելի է նույնականացնել ստորագրող անձին.

գ) էլեկտրոնային ստորագրությունը ստեղծված է այնպիսի միջոցների կիրառմամբ, որոնք ստորագրող անձը կարող է պահել իր միանձնյա իսկողության ներքո. եւ

դ) էլեկտրոնային ստորագրությունը կապված է այն տվյալների հետ, որոնց այն վերաբերում է, այնպես, որ դրանց ցանկացած հետագա փոփոխություն հնարավոր է հայտնաբերել:

2. Էլեկտրոնային բեռնագրի իսկությունը կարող է նաեւ հաստատվել իսկության էլեկտրոնային հաստատման ցանկացած այլ եղանակով, որը թույլատրվում է այն երկրի օրենսդրությամբ, որտեղ կազմվել է էլեկտրոնային բեռնագիրը:

3. Էլեկտրոնային բեռնագրում պարունակվող տվյալները հասանելի են ցանկացած կողմի, որն ունի դրա իրավունքը:

## Հոդված 4

### Էլեկտրոնային բեռնագրի կազմման պայմանները

1. Էլեկտրոնային բեռնագիրը պարունակում է այն նույն տվյալները, ինչ Կոնվենցիայում նշված բեռնագիրը:

2. Էլեկտրոնային բեռնագիր տրամադրելու համար կիրառվող ընթացակարգով ապահովվում է դրա վերջնական տարբերակն առաջին անգամ գեներացնելու պահից դրանում պարունակվող տվյալների ամբողջականությունը: Ամբողջականությունը պահպանված է, երբ տվյալներն ամբողջական են եւ անփոփոխ՝ բացառությամբ ցանկացած լրացման կամ փոփոխության, որն ի հայտ է գալիս հաղորդակցության, պահպանման եւ ցուցադրման բնականոն ընթացքում:

3. Էլեկտրոնային բեռնագրում պարունակվող տվյալները կարող են լրացվել կամ փոփոխվել Կոնվենցիայով թույլատրված դեպքերում:

Էլեկտրոնային բեռնագրում լրացումներ կամ փոփոխություններ կատարելու համար կիրառվող ընթացակարգով պետք է ապահովվի էլեկտրոնային բեռնագրում կատարված ցանկացած լրացման կամ փոփոխության հայտնաբերելի լինելը, եւ պետք է պահպանվեն դրանում ի սկզբանե պարունակված տվյալները:

## Հոդված 5

### Էլեկտրոնային բեռնագրի իրականացումը

1. Փոխադրման պայմանագրի կատարմամբ շահագրգռված կողմերը սույն արձանագրության եւ Կոնվենցիայի պահանջները կատարելու նպատակով համաձայնություն են ձեռք բերում ընթացակարգերի եւ դրանց իրականացման վերաբերյալ, մասնավորապես՝ հետեւյալի առնչությամբ.

ա) էլեկտրոնային բեռնագրի տրամադրման եւ իրավասու կողմին հանձնման եղանակը.

բ) հավաստիացում առ այն, որ էլեկտրոնային բեռնագիրը պահպանում է իր ամբողջականությունը.

գ) եղանակը, որով կողմը, որն իրավասու է ունենալ էլեկտրոնային բեռնագրից բխող իրավունքներ, կարող է ապացուցել այդ իրավասությունը.

դ) եղանակը, որով տրվում է հաստատում, որ իրականացվել է առաքում բեռն ստացողին.

ե) էլեկտրոնային բեռնագրում լրացումներ կամ փոփոխություններ կատարելու ընթացակարգերը. եւ

զ) էլեկտրոնային բեռնագիրն այլ միջոցներով տրամադրված բեռնագրով հնարավոր փոխարինման ընթացակարգերը:

2. 1-ին պարբերության մեջ ներկայացված ընթացակարգերը պետք է նշվեն էլեկտրոնային բեռնագրում եւ հասանելի լինեն ստուգման համար:

## Հոդված 6

### էլեկտրոնային բեռնագիրը լրացնող փաստաթղթերը

1. Փոխադրողն ուղարկողի պահանջով նրան է հանձնում բեռների անդորրագիրը եւ բոլոր այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են առաքումը նույնականացնելու եւ սույն արձանագրության մեջ նշված էլեկտրոնային բեռնագրին հասանելիություն ստանալու համար:

2. Ուղարկողը կարող է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի «է» ենթակետում եւ 11-րդ հոդվածում նշված փաստաթղթերը տրամադրել փոխադրողին էլեկտրոնային հաղորդակցության ձեւով, եթե փաստաթղթերն առկա են այդ ձեւով, եւ եթե կողմերը համաձայնություն են ձեռք բերել այն ընթացակարգերի վերաբերյալ, որոնք հնարավորություն են տալիս կապ հաստատելու այդ փաստաթղթերի եւ սույն արձանագրության մեջ նշված էլեկտրոնային բեռնագրի միջեւ այնպես, որ ապահովվի դրանց ամբողջականությունը:

## ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Հոդված 7

#### Արձանագրությունը ստորագրելը, վավերացնելը եւ դրան միանալը

1. Սույն արձանագրությունը բաց է Կոնվենցիան ստորագրած կամ դրա կողմ հանդիսացող պետությունների եւ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի անդամ պետությունների եւ հանձնաժողովի մանդատի 8-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովում խորհրդատվական դեր ունեցող պետությունների ստորագրման համար

2. Սույն արձանագրությունը ստորագրման համար բաց է լինելու ժնեում 2008 թվականի մայիսի 27-ից մինչեւ 30-ը ներառյալ, իսկ այդ օրվանից հետո՝ Նյու Յորքում գտնվող Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում մինչեւ 2009 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

3. Սույն արձանագրությունը ենթակա է վավերացման ստորագրող պետությունների կողմից եւ բաց է սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ չստորագրած այն պետությունների կողմից միանալու համար, որոնք Կոնվենցիայի կողմեր են:

4. Այն պետությունները, որոնք կարող են մասնակցել Եվրոպական տնտեսական հանձնաժողովի որոշ գործողություններին՝ Հանձնաժողովի մանդատի 11-րդ կետի համաձայն, եւ որոնք միացել են Կոնվենցիային, կարող են դառնալ սույն արձանագրության կողմեր՝ դրան միանալով վերջինիս ուժի մեջ մտնելուց հետո:

5. Արձանագրության վավերացումը կամ դրան միանալը կատարվում է փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու միջոցով:



6. Արձանագրության վավերացման կամ դրան միանալու մասին ցանկացած փաստաթուղթ, որն ի պահ է հանձնվել ստորեւ՝ 13-րդ հոդվածի դրույթների համաձայն սույն արձանագրության մեջ կատարված փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո, համարվում է կիրառելի փոփոխության արդյունքում վերափոխված արձանագրության նկատմամբ:

### Հոդված 8

#### Ուժի մեջ մտնելը

1. Սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում սույն արձանագրության 7-րդ հոդվածի 3-րդ կետում նշված պետություններից հինգի կողմից վավերացման կամ դրան միանալու մասին իրենց փաստաթղթերն ի պահ հանձնվելուց հետո իննսուներորդ օրը:

2. Յուրաքանչյուր պետության համար, որը վավերացնում է սույն արձանագրությունը կամ միանում է դրան վավերացման կամ դրան միանալու մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո, սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում այդ պետության կողմից վավերացման կամ դրան միանալու մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնվելուց հետո իննսուներորդ օրը:

### Հոդված 9

#### Չեղյալ հայտարարելը

1. Յուրաքանչյուր կողմ կարող է չեղյալ հայտարարել սույն արձանագրությունը՝ այդ մասին ծանուցելով Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին:

2. Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից չեղյալ հայտարարելու մասին ծանուցումն ստանալու օրվանից 12 ամիս հետո:

3. Յուրաքանչյուր պետություն, որը դադարում է լինել Կոնվենցիայի կողմ, նույն օրը դադարում է լինել սույն արձանագրության կողմ:

#### Հոդված 10

##### Արձանագրության գործողության դադարեցումը

Եթե սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո կողմերի թիվը չեղյալ հայտարարելու դեպքերի հետեւանքով կրճատվում է՝ դառնալով հինգից պակաս, ապա սույն արձանագրության գործողությունը դադարում է այն օրվանից, երբ ուժի մեջ է մտնում չեղյալ հայտարարելու այդ դեպքերից վերջինը: Այն նաեւ դադարում է ուժի մեջ լինել այն օրվանից, երբ Կոնվենցիան դադարում է ուժի մեջ լինել:

#### Հոդված 11

##### Վեճը

Սույն արձանագրության մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ երկու կամ ավելի կողմերի միջեւ ծագած ցանկացած վեճ, որը կողմերը չեն կարողանում կարգավորել բանակցությունների կամ այլ միջոցներով, տվյալ կողմերից որեւէ մեկի խնդրանքով կարգավորման համար կարող է փոխանցվել Արդարադատության միջազգային դատարան:

#### Հոդված 12

##### Վերապահումները

1. Ցանկացած պետություն կարող է սույն արձանագրությունը ստորագրելիս, վավերացնելիս կամ դրան միանալիս Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով

հայտարարել, որ չի համարում, որ սույն արձանագրության 11-րդ հոդվածն իր համար պարտադիր ուժ ունի: Մյուս կողմերը սույն արձանագրության 11-րդ հոդվածով պարտավորված չեն այդպիսի վերապահում կատարած որեւէ կողմի նկատմամբ:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հայտարարությունը կարող է չեղարկվել ցանկացած պահի՝ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցմամբ:

3. Սույն արձանագրության վերաբերյալ որեւէ այլ վերապահում չի թույլատրվում:

### Հոդված 13

#### Փոփոխությունները

1. Սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելուն պես դրանում կարող են փոփոխություններ կատարվել սույն հոդվածում սահմանված կարգով:

2. Սույն արձանագրության կողմի կողմից ներկայացված՝ սույն արձանագրության ցանկացած փոփոխության առաջարկ ներկայացվում է Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ ԵՏՀ) ավտոտրանսպորտային միջոցների հարցերով աշխատանքային խմբի քննարկմանը եւ որոշման կայացմանը :

3. Սույն արձանագրության կողմերը գործադրում են բոլոր հնարավոր ջանքերը՝ ընդհանուր համաձայնություն ձեռք բերելու համար: Եթե, չնայած այդ ջանքերին, ընդհանուր համաձայնություն ձեռք չի բերվում փոփոխության առաջարկի վերաբերյալ, ապա դրա ընդունման համար, որպես վերջին միջոց, պահանջվում է ներկա գտնվող եւ քվեարկությանը մասնակցող կողմերի երկու երրորդի մեծամասնությունը: Ընդհանուր համաձայնությամբ կամ կողմերի երկու երրորդի մեծամասնությամբ ընդունված փոփոխության առաջարկը Միավորված

ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովի քարտուղարությունը ներկայացնում է Գլխավոր քարտուղարին՝ սույն արձանագրության բոլոր կողմերին, ինչպես նաև ստորագրող պետություններին ընդունման նպատակով ուղարկելու համար:

4. Գլխավոր քարտուղարի կողմից փոփոխության առաջարկը փոխանցվելուց հետո իննամսյա ժամկետում ցանկացած կողմ կարող է տեղեկացնել Գլխավոր քարտուղարին փոփոխության առաջարկի առնչությամբ առարկություն ունենալու վերաբերյալ:

5. Փոփոխության առաջարկը համարվում է ընդունված, եթե մինչև նախորդ կետով նախատեսված իննամսյա ժամկետը լրանալը սույն արձանագրության կողմը չի ծանուցել որեւէ առարկության մասին: Եթե ներկայացվել է առարկություն, ապա փոփոխություն առաջարկն ուժ չունի:

6. Այն երկրի դեպքում, որը դառնում է սույն արձանագրության պայմանավորվող կողմ փոփոխության առաջարկի մասին ծանուցման պահի եւ սույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված իննամսյա ժամկետը լրանալու միջև ընկած ժամանակահատվածում, Եվրոպական տնտեսական հանձնաժողովի ավտոտրանսպորտային միջոցների հարցերով աշխատանքային խումբը հնարավորինս սեղմ ժամկետներում նոր կողմ պետությանը ծանուցում է փոփոխության առաջարկի մասին: Վերջինս կարող է մինչև այդ իննամսյա ժամկետը լրանալը Գլխավոր քարտուղարին տեղեկացնել փոփոխության առաջարկի առնչությամբ առարկություն ունենալու մասին:

7. Գլխավոր քարտուղարը հնարավորինս սեղմ ժամկետներում բոլոր կողմերին ծանուցում է սույն հոդվածի 4-րդ եւ 6-րդ կետերի համաձայն ներկայացված առարկությունների, ինչպես նաև վերելում ներկայացված 5-րդ կետի համաձայն ընդունված ցանկացած փոփոխության մասին:

8. Ընդունված համարվող ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում այն օրվանից վեց ամիս հետո, երբ Գլխավոր քարտուղարը կողմերին ծանուցում է այդ ընդունման մասին:

## Հոդված 14

### Դիվանագիտական խորհրդաժողով գումարելը

1. Սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելուն պես ցանկացած կողմ կարող է Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով խնդրել խորհրդաժողով գումարել՝ սույն արձանագրությունը վերանայելու նպատակով: Գլխավոր քարտուղարը բոլոր կողմերին ծանուցում է այդ խնդրանքի մասին, եւ Գլխավոր քարտուղարի կողմից գումարվում է վերանայման խորհրդաժողով, եթե Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցման օրվան հաջորդող չորս ամսվա ընթացքում սույն արձանագրության կողմերի ոչ պակաս, քան մեկ քառորդը նրան ծանուցում են խնդրանքի վերաբերյալ իրենց համաձայնության մասին:

2. Եթե նախորդ կետի համաձայն գումարվում է խորհրդաժողով, ապա Գլխավոր քարտուղարը բոլոր կողմերին ծանուցում է այդ մասին եւ նրանց առաջարկում է երեք ամսվա ընթացքում ներկայացնել այնպիսի առաջարկներ, որոնք նրանք հնարավոր է ցանկանան դնել խորհրդաժողովի քննարկմանը: Գլխավոր քարտուղարը բոլոր կողմերին ուղարկում է խորհրդաժողովի նախնական օրակարգը այդ առաջարկների տեքստերի հետ միասին՝ խորհրդաժողովի անցկացման օրվանից առնվազն երեք ամիս առաջ:

3. Գլխավոր քարտուղարը սույն հոդվածի համաձայն գումարված ցանկացած խորհրդաժողովի հրավիրում է սույն արձանագրության 7-րդ հոդվածի 1-ին, 3-րդ եւ 4-րդ կետերում նշված բոլոր պետություններին:

## Հոդված 15

### Պետություններին ուղարկվող ծանուցումները

Ի հավելումն 13-րդ եւ 14-րդ հոդվածներով նախատեսված ծանուցումների՝ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը վերելում՝ 7-րդ

հողվածի 1-ին կետում նշված պետություններին, ինչպես նաև 7-րդ հողվածի 3-րդ եւ 4-րդ կետերի համաձայն սույն արձանագրության կողմեր դարձած պետություններին ծանուցում է՝

ա) 7-րդ հողվածի համաձայն սույն արձանագրության վավերացման եւ դրան միանալու դեպքերի մասին.

գ) 8-րդ հողվածի համաձայն սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելու ամսաթվերի մասին.

գ) 9-րդ հողվածի համաձայն սույն արձանագրությունը չեղյալ հայտարարելու մասին.

դ) 10-րդ հողվածի համաձայն սույն արձանագրության գործողությունը դադարեցնելու մասին.

ե) 12-րդ հողվածի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն ստացված հայտարարությունների եւ ծանուցումների մասին:

#### Հոդված 16

#### Ավանդապահը

Սույն արձանագրության բնօրինակն ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին, որը դրանց վավերացված իսկական օրինակներն ուղարկում է սույն արձանագրության 7-րդ հողվածի 1-ին, 3-րդ եւ 4-րդ կետերում նշված բոլոր պետություններին:

ԿԱՏԱՐՎԱԾ է ժնեում սույն երկու հազար ութ թվականի փետրվարի քսանին, մեկ օրինակից՝ անգլերեն եւ ֆրանսերեն, ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույնով հավաստում եմ, որ վերոշարադրյալ տեքստը  
2008 թվականի փետրվարի 20-ին ժնեում կատարված  
«Բեռների միջազգային ավտոտրանսպորտային  
փոխադրումների պայմանագրի մասին» կոնվենցիայի  
(CMR)՝ էլեկտրոնային բեռնագրի վերաբերյալ լրացուցիչ  
արձանագրության իսկական օրինակն է, որի բնօրինակն ի  
պահ է հանձնված Միավորված ազգերի  
կազմակերպության գլխավոր քարտուղարին:

Գլխավոր քարտուղարի կողմից՝

Իրավախորհրդատու

(Գլխավոր քարտուղարի իրավական հարցերով տեղակալ)

*[ստորագրություն]*

Նիկոլյա Միշել

Միավորված ազգերի կազմակերպություն

Նյու Յորք, 2008 թվականի մարտի 25

Վավերացված իսկական օրինակ (XI.B-11b)

2008 թվականի մարտ